«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Համագործակցային ուսուցումը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Ռուզաննա Հայրապետյան

Կիմավիրի Հ. 8 հիմնական դպրոց

Ղեկավարող/մենթոր ուսուցիչ՝

Հ.Պողոսյան

Կիմավիր- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Գրականության ակնարկ 5

Գործնական համատեքստև հետազոտական ընթացք 8-16

Ամփոփում/եզրակացություն/.....17

Գրականության ցանկ.....18

Հավելված.....19

ՆԱԽԱԲԱՆ

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուայթսոն

Հայաստանն ունեցել է ուժեղ կրթական համակարգ, որը ստեղծվել է իշխանության վարչահրամայական համակարգի խնդիրները լուծելու նպատակով, մասնավո□րապես՝ կառավարման վարչահրամայական համակարգի անվտանգության ապա□հովում, համակարգի ինքնավերարտադրում և կենտրոնացված տնտեսության կա□րիքների ապահովում: Դպրոցներում հիմնականում կիրառվում էին ուսուցման ուսուցչակենտրոն մեթոդներ: Դասավանդման և ուսումնառության երկու հիմնական սկզբունքներն էին գիտելիքների անգիր անելն ու գնահատման միջոցով դրա վեր□արտադրման ստուգումը: Դա բավարարում էր սովորողներին կրթության հաջորդ աստիճանին նախապատրաստելուն և կենտրոնացված տնտեսության պահանջնե□րին: Ուսուցման մեջ որդեգրված էին անհատական և մրցակցային մոտեցումները: Սովորողների մասնակցությունը ուսուցման ընթացքում հիմնված էր հետևյալ սկզբունքի վրա. << Լավ սովորողները քաջալերվում են և ավելի են առաջադիմում, մյուսները ինքնամեկուսացվում են և ավելի են թուլանում>>: Վերջին տասնամյակների ընթացքում կատարվել են համընդհանուր փոփոխու□թյուններ, որոնք ընդգրկում են տնտեսությունը, հասարակական կյանքը, մարդկանց հոգեբանությունը, կառավարումը և նոր արժեքները: Կրթությունը, որպես ավանդա□բար պահպանողական համակարգ փոփոխվում է դանդաղորեն: Հայաստանը, որպես գլոբալ հասարակության մաս, պետք է քայլ առ քայլ իրականացնի արմատական փոփոխություններ, ինչը թույլ կտա լուծել հրատապ խնդիրները և ինտեգրվել համաշխարհային հասարակության մեջ:

Հայաստանում իրականացվող կրթական վերափոխումները նոր խնդիրներ են դնում ուսուցիչների առջև: Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույն է, փոփոխություններն անխուսափելի են: Դպրոցն ու ուսուցիչը երբեք վակուումում չեն գործել, նրանք միշտ գործել են կոնկրետ արժեքային համակարգում, կոնկրետ ժամանակում և միջավայրում: Հենց այդ հանգամանքն էլ ենթադրում է, որ ուսուցիչը անընդհատ սովորելու, ժամանակի պահանջներին համաքայլ ընթանալու խնդիր ունի:

Ուսուցման մշակույթի փոփոխություն դպրոցում

Չօգնել → Օգնել իրար

Չասել/Չխոսել → Ինչքան խոսում եք, այնքան սովորում եք

Ավանդական դպրոց	Կառուցողական դպրոց
-կրթակարգը/ուսումնական ծրագիրը հիմնականում ներկայացված է մասիցդեպի ամբողջը -ծրագրային վարժությունները տեղակայ-ված են դասագրքում -աշակերտը դիտարկվում է որպես<< դա-տարկ անոթ>>, որի մեջ հոսում է տեղե- կատվությունը -ուսուցիչները ընդունում են հավերժ սո-վորեցնողի կերպար -արժևորվում են ճիշտ պատասխանները -գնահատումը հենված է ստուգման վրա և առանձնացված է ուսուցումից -աշակերտները հենց սկզբից և հիմնակա-նում աշխատում են միայնակ	-կրթակարգը/ծրագրերը ներկայացվումեն ամբողջից դեպի մասերը -արժևորվում են աշակերտների կողմիցհարցեր տալն ու տեղեկատվության իսկական աղբյուրները -աշակերտները դիտարկվում են որպես ակտիվ մտածողներ, ովքեր ունեն իրենցսեփական գաղափարները -ուսուցիչները դրսևորում են փոխներ-գործուն վարքագիծ -արժևորվում են աշակերտների տեսա-կետները -գնահատումը միահյուսված է ուսուցման հետ և տեղի է ունենում դիտարկումների միջոցով -աշակերտները հենց սկզբից աշխատում են խմբում

Գրականության ակնարկ

Համագործակցային մեթոդների ընդհանուր բնութագիրը

Ժամանակակից մանկավարժության գերխնդիրը ոչ թե երեխային սովորել սովորեցնելն է, այլ երեխայի մեջ սովորելու ցանկություն և նոր գիտելիքներ ձեռք բերելու անընդհատ ձգտման ձևավորումը՝ դրանով պայմանավորելով ուսումնական գործընթացի հաջողությունը, ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները, ինչպես նաև աշակերտ- կոլեկտիվ համագործակցությունը: Methodos հունարենից թարգմանաբար նշանակում է <<ուղի, միջոց>>: Ուսուցման մեթոդ ասելով՝ մենք հասկանում ենք անընդհատ կիրառվող աշխատանքի ձև, որը կիրառում է ուսուցիչը՝ ուսումնական գործընթացում, որը հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտների իմացական կարողությունները, հետաքրքրությունները, ձեռք բերել նոր կարողություններ և հմտություններ, ինչպես նաև այդ ամենը կիրառել գործնականում: Ուսուցման մեթոդների մշակման ասպարեզում մեծ ավանդ ներդրեցին Վերածննդի դարաշրջանի հումանիստ մանկավարժներ Վիտտորինո դա Ֆելտրեն, Ֆրանսուա Ռաբլեն, Թոմաս Մորը, Միշել Մոնտեն և ուրիշներ: Նրանք առաջարկում էին դպրոցում կիրառել ուսուցման ՝ զրույցի, վարժությունների, ցուցադրման մեթոդները: Հայ մանկավարժության պատմության մեջ ուսուցման մեթոդների հիմնավորման գործում մեծ ավանդ են ներդրել նաև հայ դպրոցի ու մանկավարժական մտքի նշանավոր գործիչներ: Այսպես օրինակ, 7-րդ դարի ականավոր գիտնական մանկավարժ Անանիա Շիրակացին ուսուցման գործընթացի կազմակերպման կարևոր պայմաններից էր համարում ուսուցման գործընթացում բազմաբնույթ մեթոդների գործադրումը:

Վերածննդի դարաշրջանի ականավոր գիտնական մանկավարժ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը նրանցից մեկն էր, ով անընդհատ որոնում ու գտնում էր ուսուցման ավելի արդյունավետ այնպիսի մեթոդներ, որոնք ընդունելի են եղել հետագա բոլոր ժամանակների առաջավոր դպրոցների կողմից և համահունչ են անգամ այսօրվա դպրոցի պահանջներին: Հայկական դպրոցի պատմության մեջ առաջին անգամ նա էր, որ կարդալ ու գրելու անջատ ուսուցման փոխարեն մտցրեց մինչ այդ չընդունված միաժամանակյա ուսուցման եղանակը: Նա հորդորում էր իր աշակերտներին ոչ միայն կարդալ, այլև գրել: Նա իր աշակերտներին կարդալ ու գրել է ուսուցանել, բացատրելու, գրքի վրա աշխատելու, վարժությունների, հարցազրույցի, ստուգման ու գնահատման և ուսուցման այլ մեթոդներով:

Միջնադարի հայ մանկավարժության մեջ նորություններ մտցրեց իր ժամանակի առաջավոր մանկավարժներից Ներսես Շնորհալին: Նա հարցերին մոտենում էր<<դիդակտիկական-ուսուցական տեսակետներով>>: Շնորհալու հիմնադրած դպրոցներում նկատվում են մի շարք առարկաների դասատվության ընթացքում ուսումնական նյութը ցուցադրելու,նկարելու, գծագրելու միջոցով տեսանելի դարձնելու որոշ փորձեր:

Հայ մանկավարժության մեջ երախտավոր Վարդան Արևելցու առաջադրած ուսուցման հիմնական մեթոդներից են պատմելու, բացատրելու, դերերով կարդալու, գրաֆիկ աշխատանքների մեթոդները:

Մեծ ուսուցչապետ Հովհան Որոտնեցին բացառիկ նշանակություն է տվել գործնական մեթոդներին, գրավոր և բանավոր վարժություններին:

Հայ մեծ լուսավորիչ մնակավարժ Խ. Աբովյանն իր աշխատություններում մեթոդական ձեռնարկներում քննարկել է ուսուցման տեսության բազմաբնույթ հարցեր, անդրադարձել է նաև ուսուցման մեթոդներին: Անընդհատ որոնումներ կատարելով՝ նա գտնում և պրակտիկայում գործադրում էր ուսուցման արգասավոր մեթոդներ՝ ուսումնական նյութի պատմելն ու բացատրելը, զրույցը, գրքի վրա ինքնուրույն աշխատելը, վարժությունները, էքսկուրսիան, գործնական աշխատանքները և այլ մեթոդներ: Խ. Աբովյանն իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին առանձնահատուկ ուշադրություն է դարձրել մայրենի լեզվի ավանդական մեթոդներին: Նա գրաճանաչության գործընթացը անչափ պարզեցրեց՝ ներմուծելով հնչյունային մեթոդը:

Ուսուցման մեթոդների ընդհանուր համակարգում Ա. Բահաթրյանն առանձին կարևորություն է տալիս ուսուցչի կողմից իրականացվող պատմելու, բացատրելու մեթոդին, զրույցին, վարժություններին, խմդիր-առաջադրանքներին, սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը զարգացնող բանավեճերին: Արժանի տեղ էր

տալիս նաև ցուցադրման, էքսկուրսիայի, գործնական աշխատանքների մեթոդներին:Արդարացի է Ա. Բահաթրյանի պահանջն այն մասին, որ ուսուցիչը պետք է ձգտի դասի ժամանակ կիրառել բազմազան մեթոդներ, որպեսզի նյութը յուրաքանչյուր աշակերտ յուրացնի իր հնարավորություններին համապատասխան:

<<Երեխան կարող է և չլինել նշանավոր գիտնական , բայց դառնալ ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը, ինքնակատարելագործվել, իրացնել իրեն շրջակա աշխարհում , նրան անհրաժեշտ է սովորել>>:

Գործնական համատեքստ

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը Անգլիայում կիրառում է սովորողների փոխուսուցումը :

Ի՞նչ է համագործակցային ուսուցումը:Բերված գծագիրը ցույց է տալիս համագործակցային ուսուցման հիմնական հատկանիշները:



Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- նյութի բովանդակությունից,
- ուսումնական նյութի ծավալից և բարդությունից,
- նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունից և համագործակցային հմտությունների մակարդակից,
- աշակերտների տարիքային առանձնահատկություններից,
- ուսումնական ժամաքանակից,
- ուսուցման նյութատեխնիկական պայմաններից,
- ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից[9] և այլն:

Մեթոդական հնարներ

Ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից մեկը ուսուցչի կողմից բազմազան մեթոդների կիրառումն է, դրանց ներդաշնակ համադրումն ու տրամաբանական անցումներն մեկից մյուսին: Այս իմաստով արդյունավետ են պարզ և կազմակերպական մեծ նախապատրաստություն, միջոցներ և նյութեր չպահանջող մեթոդական հնարները: Սրանք ինքնուրույն կամ անկախ կիրառություն ունեն, սակայնավարտուն, վերջնական արդյունք ստանալու նպատակով հաճախ ներառ- վում են ամբողջական մեթոդների կազմում:

1**. Խմբավորում**. օգնում է աշակերտներին ազատ, անկաշկանդ մտածել որևէ թեմայիշուրջ, հնարավորություն է տալիս մեծ ծավալով մտքեր, գաղափարներ կուտակել,

այնուհետև մտածել և բացահայտել այդ գաղափարների միջև գոյություն ունեցող կա-պերը: Հնարը կարող է օգտագործվել դասի տարբեր փուլերում, կարող է կատարվել անհատապես, զույգերով կամ փոքր խմբերով: Կարելի է լիրառել ինչպես ավանդա- կան, այնպես էլ համագործակցային դասի ժամանակ:

Նկարագրությունը. Գրատախտակին գրում ենք բանալի բառը կամ թեման և հանձա-ռարում շուրջը գրել թեմային առնչվող բառեր, իրադարձություններ, տարեթվեր,

այնուհետև գծերով միացնել իրար հետ ինչ-որկապ ունեցող բառեր: Անհատական կամ խմբային աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամբողջ լսարանին, կա-րելի է նաև անհատապես կատարված աշխատանքները սովորողները կարող են նա- խապես քննարկել զույգերով կամ ուսուցչի հետ:

Ձնակույտ. այս հնարը կարելի է կիրառել որևէ թեմայի կամ ենթավերնագրի ինքնու-րույն ուսումնասիրության համար , եթե այն ծավալով փոքր է : Սովորողները ուսումնասիրում են հանձնարարված նյութը ինքնութույն և կազմում են նյութին վերաբերող 2-3 հարց , երկրորդ փուլում կազմած հարցերի միջոցով քննարկում են նյութը զույգերով, հետո չորս հոգով, որից հետո կազմակերպվում է համադասարա-նային քննարկում ուսուցչի կողմից կազմած հարցերով:

T-ձև և m-ձև աղյուսակ. Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության հակադիր որակները, դրա-կան կամ բացասական կողմերը

Աղյուսակը ճկուն է, կարող է կիրառվես անհատապես կամ խմբով աշխատելիս, դա-սերի տարբեր փուլերի ընթացքում, և ավանդական, և համագործակցային դասերին:

m-ձև աղյուսակը T-ձև աղյուսակի մեկ այլ տարբերակ է, որը միևնույն հասկացությաներեք տարբեր վերաբերմունք կամ կարծիք արտահայտելու հարմար միջոց է:

1	2	3

Մտքերի քարտեզագրում. Քարտեզը սկսում են կազմել հետևյալ կերպ: Նախ շրջանիմեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, որից հետո հանձնարարվում է գրել ուղեկից հասկացությունները, մտքերն ու գաղափարները, վերցնել դրանք օղակների մեջ, միացնել իրար և ստանալ բաղմաճյուղ պատկեր, որիցհետո աշակերտները օգտագործում են պայմանական նշաններ. ? - անհրաժեշտ է
ճշտել, + - ուսումնասիրությունը ավարտված է, հասկանալի, ! – հետաքրքիր է , պետք է հիշել:



Վենի դիագրամ. Կառուցվում է երկու կամ ավել շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այն կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով, Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու կամ ավել հասկացությունների ընհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները: Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացությունների համեմատություն), այնպես էլ բարդ (երեք-չորս հասկացությունների համեմատության համար):



Պրիզմա. հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզման կիրառվում է դասի խթանման փուլում ապահովելով ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը:



Քառաբաժան. հարմար է տեքստի հետ աշխատելիս, կարելի է կիրառել փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելուց համար անհրաժեշտ է մաքուր թուղթ, որն անհրաժեշտ է բաժանել չորս մասի: Քառա-բաժանը գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատաս- խանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Կարելի է ձևակերպել հետև- յալ հանձնարարությունները.

1) Որն է նյութի գլխավոր գաղափարը

2) Կազմել նյութին վերաբերող մեկ հարց

3) Նոր վերնագիր

4) Լոգո

Հարկ է նշել, որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասիկշռադատման փուլում:

Մտագրոհ կամ մտքերի տարափ. Գրատախտակին գրել մեկնաբառը, շրջանագծել, խնդրել մասնակիցներին շրջանաձև գրառել սեփական բառերը, գաղափարները: Այս հնարը կարելի է կիրառել խթանման փուլում աշակերտների նախնական գիտելիքնե- րը պարզելու համար:

Ելքի քարտերի միջոցով դասի ավարտին հավաքագրվում են սովորողների պատասխանները: Հիմնվելով պատասխանների վրա՝ ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը, որպեսզի առանձնացնի և անդրադառնա չյուրացված հասկացություններին, գաղափարներին:

Հետազոտության ընթացքը

Այստեղ տեղին է հիշել հայտնի մանկավարժ Սկատկինի խոսքերը.‹‹Մեթոդը ճանապարհ է, որով ուսուցիչն աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք,անկարողությունից դեպի կարողություն››:

Այսինքն՝ աշակերտներին դեպի գիտելիք և լուսավոր աշխարհ տանելու համար մեզանից յուրաքանչյուրը կարող է օգտագործել բազմաթիվ և բազմապիսի մեթոդներ, որոնք պետք է պլանավորել և իրականացնել այնպես, որ աշակերտներին մղի համագործակցության և նպաստի նրանց ակտիվ մասնակցությանը ուսուցման գործընթացին:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու

հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար՝ խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է. ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Համագործակցային ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է ներկայանա որպես դիտարկող և միաժամանակ աջակցող, ում հնարավորություն է ընձեռվում ձևավորել աշակերտների խմբերն այնպես, որ նրանց տեղաբաշխումը ճիշտ և նպատակային լինի, որպեսզի վերջնարդյունքում նպաստի աշակերտների սոցիալական հմտությունների և կարողունակությունների զարգացմանը:

Մեթոդների կիրառումը նպաստում է՝

- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
- կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավմանը,
- ինքնագործունեության խթանմանը,
- ճանաչողական գործընթացների խթանմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
- աշակերտի անհատական հաղորդակցական –զգայական ոլորտի զարգացմանը,
- ուսումնական դրական խթանի զարգացմանը:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.

գնահատում:

Դասաժամերն անցկացրել եմ համագործակցային ուսուցմամբ՝ կիրառելով համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ՝ Խմբային աշխատանք, Մտագրոհ ,5 րոպեանոց ազատ շարադրանք, Ելքի քարտեր, m – աձև աղյուսակ

,Հարցադրումների մեթոդ:

Հետազոտության ընթացքում փորձում էի պարզել համագործակցային ուսուցման և կիրառվող մեթոդների արդյունավետությունը : Անցկացրել եմ 2 դասաժամ ,արդյունքները ներկայացնում եմ հարցաթերթիկների և դիագրամի միջոցով:

Աշակերտի հարցաթերթիկ

	Այո	Ոչ այնքան	Բավարար չափով
Դասի թեման հետաքրքիր էր	8	2	8
Ընտրված առաջադրանքները հետաքրքիր էին	10	1	7
Տրամաբանական առաջադրանքները կատարեցի հեշտությամբ	9	3	6
Դասին մասնակցեցի հաճույքով	10	2	6

Փորձագետի դիտարկումներ

	Հետազոտության I օր	Հետազոտության II օր
Մասնակցում է դասին	10 աշ.	11 աշ.
Ուշադիր էին	4 աշ.	6աշ.

Ճիշտ էին կատարել առաջադրանքը	8 աշ.	9 աշ.
Անտարբեր էին	4. աշ.	1 աշ.
Ոգևորված էին	5 աշ.	8 աշ.

Աշակերտի հարցաթերթիկ

	Այո	Ոչ այնքան	Բավարար չափով
Դասի թեման հետաքրքիր էր	12. աշ.	1աշ.	5աշ.
Ընտրված առաջադրանքները հետաքրքիր էին	12աշ.	0	8աշ.
Տրամաբանական առաջադրանքները կատարեցի հեշտությամբ	10աշ.	2 աշ.	6աշ.
Դասին մասնակցեցի հաճույքով	12 աշ.	0	6աշ.


30
25
20
15
10
5
0
Դիտարկում 1
Դիտարկում 2
Ակտիվ են
Ճիշտ են կատարել առաջադրանքը
Ուշադիր են
Անտարբեր են

Ամփոփում

Իմ դիտարկումների ընթացքում հանգեցի այն եզրակացության, որ համագործակցային մեթոդները սովորողների ինքնուրույնության, շարժառիթների իրականացման լավագույն ձևն են: Միասին աշխատելով աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել: Այն ապահովում է սովորողների ճանաչողական գործընթացների (խոսք, հիշողություն, մտածողություն) և սովորողների անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացմանը:

- Ուսումնասիրելով և վերլուծելով համապատասխան գրականությունը,եկա այն համոզման, որ համագործակցային մեթոդները իրենց կարևոր տեղն ունեն միջին դպրոցում, որոնց կիրառությունը նպաստում է դպրոցականների անձի սոցիալականացմանը և ինտեգրմանը հասարակության մեջ:
- Համագործակցային ուսուցման հիմնական տարրերի բացահայտումը և կիրառումը հիմնավորեց համագործակցային միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը, որն օգնում է ուսուցչին բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
- Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտեցի, որ ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համալիրի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդում, այլև խթանում է սովորողների ինքնուրույնությունը, ակտիվ ճանաչողական և տրամաբանական գործընթացները:

Ընդհանրացնելով կարող եմ ասել, որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններրից մեկը ուսուցման նորագույն մեթոդներին տիրապետելն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ.,Վարդումյան Ս., Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Պետրոսյան Ռ., Երեմյան Լ.,<< Ուսումնառությունն ու դասավանդումը դպրոցում>>(ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Այրեքս>> 2001
2. Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., << Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները>> (ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Տիգրան Մեծ>>2005
3. Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխա- տանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախա- շավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ»
4. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006
5. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, <<Անտարես>> հրատ., 2006
6. Վարդումյան Ս., Ջաղինյան., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, <<Նայյան տապան>> հրատ., 2005
7. Վինցե Սաբո, Ադամ Մերենյի Աթիլլա Տակաչ, <<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ, 2006
8. <<Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ>>, Վանաձոր, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, 2008

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան

Դասարան - VIII ա

Առարկա - Հայոց լեզու

Թեմա - Թեմայի ամփոփում . տեղի, ժամանակի և ձևի պարագաներ

Ուսուցիչ - Ռ. Հայրապետյան

Ուսուցչի օգնական – Մ. Նազեյան

Դասի նպատակը

- Ամփոփել առարկայական գիտելիքները տեղի, ժամանակի ,ձևի պարագաների վերաբերյալ

Վերջնարդյունք

- Կազմել տարբեր հոլովաձևերով տեղի, ժամանակի, ձևի պարագա ունեցող նախադասություններ
- Տեղի, ժամանակի, ձևի մակբայներով , դերանուններով , գոյականով ու կապային կառույցներով կազմել նախադասություններ
- Հատվածից դուրս գրել պարագաները՝ նշելով, թե ինչո՞վ են արտահայտվել
- Գիտելիքը գործնականում կիրառելու կարողությունների զարգացում
- Խոսքի զարգացում , բառապաշարի հարստացում
- Խմբի անդամներին օգնելու , խրախուսելու , արդյունավետ համագործակցելու հմտությունների զարգացում

Անհրաժեշտ պարագաներ, օգտագործվող նյութեր – դասագիրք, տետր, գրիչ, կպչուն թղթեր, քարտեր, նկարներ,պաստառ

Միջառարկայական և ներառարկայական կապ - գրականություն, բառագիտություն, հնչյունաբանություն, ձևաբանություն ,ռ.լեզու

Մեթոդներ - Հարցադրումների մեթոդ,Մտագրոհ, Խմբային աշխատանք, Քարտեզագրում ,m – աձև աղյուսակ,Ելքի քարտեր:

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս – Հաշվառում, տնային աշխատանքների ստուգում

Անցած նյութի հարցում – Ուսուցչի ուղղորդված հարցադրումներով աշակերտները վեր կհանեն գիտելիքները բայական անդամի լրացումների վերաբերյալ: Քարտեզագրման միջոցով կներկայացնեն տեսակները:

Խթանում

« Մտագրոհ»- ի միջոցով սովորողները կթվարկեն պարագաները : Աշակերտներին կբաժանվեն կպչուն թղթեր, որոնց վրա գրված կլինեն նախադասություններ: Սովորողները կկարդան նախադասությունները, կորոշեն, թե ընդգծված բառը ինչպիսի պարագա է և կփակցնեն գրատախտակին գծված m – աձև աղյուսակի համապատասխան սյունակում:

Իմաստի ընկալում

Սովորողները կներկայացնեն պարագաները ՝ տեղի, ժամանակի և ձևի: Օրինակներ կգրեն: Կներկայացնեն , թե ինչ խոսքի մասերով են արտահայտվում:

Կշռադատում

Կազմակերպվում է խմբային աշխատանք : Խմբերը ձևավորելու համար աշակերտներին նախադասություններ կտրվեն, որտեղ ընդգծված է որևէ պարագա: Նրանք կորոշեն , թե ինչ պարագա է նշվածը և կնստեն համապատասխան անվան խմբի սեղանին: Ուսուցչի օգնականը կբաժանի առաջադրանքներով քարտեր: Առաջադրանքները կատարելու համար կտրվի ժամանակ: Ավարտելուց հետո կկարդան, կստուգեն , իսկ երկրորդ առաջադրանքը կգրեն նաև գրատախտակին (նախադասությունների շարահյուսական վերլուծություն):

Տարբերակված ուսուցում

Ետ մնացող աշակերտները կստանան անհատական առաջադրանք:

Հետադարձ կապ –Ելքի քարտերի միջոցով կկատարվի անդրադարձ(ի՞նչ գիտեի, ի՞նչ սովորեցի):

Աշակերտների գնահատում- ձևավորող,միավորային

Տնային հանձնարարություն – Գրե՛լ շարադրություն «Ինչու՞ են հիշողությունները կարևոր » վերնագրով և ընդգծե՛լ տեղի, ժամանակի և ձևի պարագաները: